*Quick*DASH միավորների հաշվումը

*Quick*DASH հաշվարկվում է 2 բաղադրիչով՝ անկարողության/ սիմպտոմների բաժին (11 կետ, 15 միավոր) և ընտրողական ակտիվ սպորտաձևերի/ երաժիշտների կամ աշխատանքի բաժիններ (4 կետ, 15 միավոր):

Անկարողության/սիմպտոմների գնահատական

11 կետից առնվազն 10-ը պետք է լրացված լինեն, որպեսզի կարելի լինի հաշվել միավորը: Բոլոր լրացված պատասխաններին տրված գնահատականները պարզապես գումարվում և միջինացվում են՝ առաջացնելով 5 բալանոց միավոր: Այս գնահատականն այնուհետև վերափոխում են 100 բալանոց միավորի՝ հանելով 1 և բազմապատկելով 25-ով: Այս վերափոխումն արվում է, որպեսզի ավելի դյուրին լինի համեմատել 0-100 բալանի այլ սանդղակների հետ: Ավելի բարձր գնահատականը նշանակում է ավելի մեծ անկարողություն:

*Quick*DASH անկարողության / սիմպտոմների գնահատական =

$$\left(\frac{[\text{n պատասխանների գումար}]}{\text{n}} - 1\right) \times 25,$$

որտեղ n-ը հավասար է լրացված պատասխանների քանակին:

Ընտրողական բաժիններ (ակտիվ սպորտաձևերի / երաժիշտների կամ աշխատանքի)

Կա 2 ընտրողական բաժին, որոնցից յուրաքանչյուրը կազմված է 4 կետերից: Ընտրողական բաժինները ստեղծված են մարզիկների, երաժիշտների և աշխատավորների այլ խմբերի համար, ում աշխատանքները պահանջում են ֆիզիկական կատարողականության բարձր մակարդակներ: Այդ անհատները կարող են դժվարություններ ունենալ միայն կատարման նշված բարձր մակարդակների վրա, որոնք գտնվում են 11-կետանի *Quick*DASH ծածկույթից դուրս: Անկարողության/սիմպտոմների գնահատականի համար վերևում նկարագրված նույն գործողությունը կատարում են ընտրողական 4-կետանոց բաժնի գնահատականը հաշվելու համար: Ընդ որում պետք է բոլոր 4 հարցերն էլ պատասխանված լինեն: Բոլոր լրացված պատասխաններին տրված գնահատականները պարզապես գումարում և բաժանում են 4-ի (կետերի թիվը), հանում 1 և բազմապատկում 25-ով՝ 100-բալանի սանդղակով գնահատական ստանալու համար:

Չլրացված կետեր

Եթե պատասխանողի կողմից կետերի 10%-ից ավելին (այսինքն, ավելի քան 1 կետ) թողնվում են անպատասխան, ապա անհնար է հաշվել *Quick*DASH անկարողության/սիմպտոմների գնահատականը: Միևնույն կանոնի համաձայն (այսինքն, եթե կետերի 10%-ից ավելին թողնվել է դատարկ), ընտրողական բաժիններում անպատասխան կետեր պետք է չմնան, քանզի դրանք կազմված են միայն 4 կետերից:

© Institute for Work & Health 2006. All rights reserved.
Armenian translation courtesy of Davit O. Abrahamyan MD, PhD and Gevorg Yaghjyan MD, PhD,
Plastic Reconstructive Surgery & Microsurgery Center, University Hospital No 1. Yerevan, Armenia

THE

QuickDASH

OUTCOME MEASURE

… վերին վերջույթների
անկարողության և սիմպտոմների
գնահատման ավելի արագ ուղի

Միավորների հաշվումը